Ե. ՏԱՐԻ — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 29 ՅՈՒՆՎԱՐ 1903 — ԹԻՒ 488

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 տլր.
Վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 և իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքէն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ:

Վառնայի համար ձեռքէ 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ ղրկել Խմբագրութեան հասցէին.

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռքէ)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձեռքէ)(15 ՍԱՆԹԻՄ)(
—o—

Դրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

Հոգիս անզուսպ բողոքով մը առլցուն
Մտայ ես հոն, ներս հաւատքին տաճարէն,
Ուր գիշեր թէ անդադար կը ճառե՛ն
Գովեստներ, աղերսներ մեծ Աստուծուն.

Բայց ես չինկայ գետին իբրեւ յանցաւոր,
Որ ունս արցունք հոսին աչքէս ու քրտնիմ
Երեսներս քարերուն զարկ ու ծընեմ.
Ես չ'երգեցի ողբ-աղօթք մը կեղծաւոր.

Չը խնդրեցի ոչ խելք, ուսում, ոչ հանճար,
Ոչ ալ արծաթ, ոսկի կոյտեր, գանձ անհուն.
Չ'տենչացի լոյս կայսեր մը գահուն,
Տիրողի մը կեանքին շուքն ու անուան.

Չ'հայցեցի մեղքիս համար ապաշխար,
Այլ հին տենչս—իմ հաւատքիս պսակ յստակ—
Զէնքը ուսիս, բոց-վրէժը լանջքիս տակ
Կռուիլ երթալ դէպի երկիր սարսափու:

Ես խօսեցայ սիրոյ անման Արարչին,
Արիւնլուայ մեր լեռներէն, դաշտերէն.
Պատմեցի սեւ ցաւերը, որ կը տիրեն
Դ՛ն հոն, հայու գիւղերուն մէջ, իր աչքին.

Ես ըղձացի դառնալ զեղուկ մի տղայ,
Հոգ չէ, ըլլամ պարզ զինեակ մը բերդուս,
Բաւ է որ ըլլան պողպատ-շիղեր բեռերուս,
Թուր մը ձեռքիս, որ զերթ փայլակ շողշողայ.

Բաւ է տաս ինձ անսանձեալ մը դարձեալ,
Որ Անտոկի բարձունքներէն սէգ լեռան
Կռուին բոցը, թէ՛ զէնքն ալ իսկ ըլլար ան,
Ա՜լ ի՞նչ պէտք էր ինծի կեանք մը հանդերձեալ.

Վ. Է. Տ. Ա.

ԲԱՑ ՆԱՄԱԿ Պ. ՉԵՐԱԶԻՆ

Յարգելի՛ ուսուցիչ,

Թերեւս զարմանաք ու քիչ մըն ալ ծամածռէք երբոր ձեզի այս տիտղոսը տալու պատիւը շնորհեմ ինքզինքիս: Ամէն պարագայի մէջ, սակայն, իրականութիւն է որ ուսուցիչս եղած էք բարեյիշատակ և անմոռանալի Կեդրոնականին մէջ, երբ հոն «կարգապահ» էիք, ասկէ տասնըվեց տարի առաջ: Անկեղծութիւնը կունենամ խոստովանելու թէ այդ թուականէն,—տղայութեան, անփորձութեան և չլացումի թուականն,—սրտիս խորը ձեզէ յիշատակ մը պահած էի խնկալէտ ու գրեթէ պաշտողական, այնքան որ երբ արտասահման եկայ՝ դեռ այդ յիշատակը այնպէս անվթարօրէն կը տեւէր տիրել սրտիս, որ այս էջերուն մէջ իսկ, հինգ տարի առաջ, ձեր երեսնամեայ գործունէութեան տարելիցին առթիւ,—ձեր կողմէ ծանուցուած,—միակ հայն եղայ որ ներբողանքի մէկ քանի դափնեզարդ տողեր հիւսեցի ձեր անունին շուրջը: Անշուշտ չէք մոռցած այդ անհարկի «քանեժիոլիք»ը, զոր այսօր կ'ափսոսամ գրած ըլլալուս:

Հեռուէն շուտ մը չէի կրցած գնահատել ամբողջ ծաւալը գաղտնիկ սափակութեան, կանխահաս ցնդածութեան և անպարագիծ սնամտութեան, որոնք կը յատկանշեն ձեր պարապ նկարագիրը: Ու հիմա կը հասկնամ կոր անսահման տարբերութիւնը ընդմէջ պատանեկան պոռոտ և ապուշ տպաւորութեանց և չափահասութեան կուռ և կշռուած հասկացողութիւններուն: Անփորձութեան պատրուակին տակ, սակայն, ինքզինքս չքմեղացնելու մխիթարութիւնն ունիմ: Ու գիծ մը կը քաշեմ այն անգիտակից տողերուն վրայէն, զորս անդարձ ու միամիտ յարգանք մը մղած էր զիս արտադրելու:

Այն երջանիկ թուականէն ի վեր ուր դուք և ձեր մէկ քանի նմանները կը տիրէիք հայկական հրապարակին, հայրենասիրութիւնը կ'անձնաւորէիք մոլորուղին աչքին, և ազգային փրկութեան ասպետները կը ներկայանայիք, այն երջանիկ թուականէն ի վեր ուր անվերաքննելի պատգամներ կը կլլեցնէիք միամիտ և անգիտակից ամբոխին, կացրդական ճռռոմ ճառերու անձրեւի մը տակ խեղճ սնամէջ հոգիներ կը թրջէիք, և գործունէութիւն մը կը հանդիսադրէիք, որուն վրայ Սերվանդէսի անմահ հերոսը պիտի նախանձէր, այն թուականէն ի վեր, աւա՜ղ, ամէն բան փոխուեցաւ: Փոխուեցան բարքերը, ըմբռնումները, գործելու եղանակները: Փոխուեցան մարդիկը մանաւանդ, հինին նորը յաջորդեց խիզախ և ցնորեցուցիչ ուժգնութեամբ մը, և հինին խլեակները, կոտրատած փտտած, խղճալիօրէն սկսան տատանիլ յորձանալից հոսանքին վրայ, զոր ազգային կեանքը կը ներկայացնէ հիմա: Դուք այս խլեակներէն էք. և վերջին ծայր վաւեշտական կըլլաք ինքզինքնիդ ջուրին երեսը բռնելու ցաւագար ճիգերովն, որոնք անհետացող սերունդի մը օրհասական ջղաձգումներն են և որոնք ամէնէն ցաւագին երեւոյթներէն մէկը կը ներկայացնեն հայութեան այս շրջանին:

Մոռացումի և աննշանութեան վտանգին դիմագրելու ձեր այդ ծիծաղաշարժ ճիգերէն մէկն է այն թերթը զոր ամիսը անգամ մը հանրութեան հրամցնելու անճաշակ և ռամիկ փութկոտութիւնը կունենաք ամէն տեսակ ափեղցփեղութիւններով ծեփելէ թխմելէ ետք զայն: Թերեւս դուք տարբեր մեկնութիւն տաք այն ներողամիտ հանդուրժանքին, որով ցնորամտութեան այդ գլուխ-գործոցը կընդունուի այսչափ տարիներէ ի վեր, ամիսը անգամ մը: Ատիկա ալ ձեր ինքնախաբէութեան ապացոյցներէն մէկն է:

Բայց, ամէնը թող, սա ձեր վերջին թիւին պարունակութի՞ւնն ինչով որակել: Ո և է մակարդակի մը վրայ մնալու եսական արդարացումը բաւական չէ սակայն որ դուք, անհամ ազգասէր, եզական ըլլալու համար ելլաք պաշտպանէք Օրմանեանի պէս հրէշ մը, զոր, աւա՜ղ, գթոտ կապար մը չկրցաւ դիտապաստ սատկեցնել՝ Սուլթան Համիտին հետ այս վերջին ժամանակներուս ամէնէն աղէտաւոր մարդուն ձեռքէն ազգը ազատելու համար:

Ազնիւ ուսուցիչս,

Շուարած եմ ձեր ընթացքին հանդէպ: Տրամաբանութեան և մտքի ինկածութեան այսօրինակ յայտնութեան մը առջեւ, մարդ իրաւ որ ուրիշ բան չի կրնար ընել եթէ ոչ ապշիլ:

Աղէկ կը յիշեմ որ Կեդրոնականի մէջ մեզի հայերէն շարագրութեան դաս նայած ատեննիդ կը պատուիրէիք որ մեր շարադրութիւնները դասատուին ներկայացնելէ առաջ մէկ քանի անգամ աչքէ անցունէինք: Երանելի մարդ, այս փրկարար պատուէրը հիմա ինչո՞ւ չէք գործադրեր ձեր կեանքին զառածանութեան այս սրտաշարժ շրջանին մէջ. ձեր յօդուածները ինչո՞ւ լոյս ընծայելէ, հանրութեան մատուցանելէ առաջ, աչքէ և մանաւանդ խղճմտանքի բովէն չէք անցըներ:

Լահէի հեռագրին պատմական ոճրագործութիւնը չէք վարանիր պարզ «կաֆ» մը անուանելէ: Լուսնո՞տ էք ինչ էք: Բայց եթէ ազգը կարենար գուշակել թէ նոյն իսկ այն անձը, որուն՝ իր ցաւը Խաղաղութեան Համաժողովին ներկայացնելու պատմական դերը տուաւ՝ վերջէն գրէթէ համամիտ պիտի գտնուէր մեծագոյն եղեռնագործութեան զոր հայ պատրիարք մը երբեք գործած ըլլայ իր ազգին հանդէպ, տարակոյս չկայ որ այդ դժբախտ ընտրութիւնը չպիտի ընէր: Հիմակ, արարք մը գնահատելու

ձեր այս եղանակովը, կը դառնաք կրկին մեղսակից մը Օրմանեան պատրիարքին։

Հապա ձեր միւս փաստաբանութիւնն՞ը՝ հայ անձնազոհ հերոսին մեծագործութիւնը նշաւակելու համար. անոնք կուգան կառուցանել ապուշութեան այն հոյակապ լաստակերտը որուն կատարին վրայ կը գահակալէք ձեր գառամութեան ամբողջ ցոլարձակմամբը։

Քանի մը բառով յիշեմ զանոնք։

Օրմանեան մեր հազուագիւտ և հոյակապ եկեղեցականներէն մէկն է եղեր, որովհետեւ՝ պանթիւ անհամար ծառայութիւններ մատուցեր է մեր եկեղեցիին և մեր ազգին և որ կը մատուցանէ ամէն օր !!! ... Անիկա ատուածաքանութիւնը Եւրոպայի մէջ ուսեր է, իտալերէն և լատիներէն գիտէ, ժամանակով կաթոլիկ՝ ետքէն լուսաւորչական եղեր է, և՝ իվեր քան զամենայն՝ 1888ին՝ մեր Մինաս աղբարիկին հետ Ա. Նիի աւերակները այցելելով հոն թափեր է արցունքներ... որոնց վրայ կոկորդիլոսներն իսկ պիտի նախանձէին։

Այսպէս ուրեմն, պատուական ուսուցիչս, ձեր խելքով, ձեր եզական տրամաբանութիւնովը, անուրանալի, անմերժելի և տիպար ապդասէր է այն մարդը որ անգամ մը կրօնքը փոխած է, կրօնագիտութիւնը Եւրոպա սորված է, քանի մը լեզու կը խօսի և հին քարի մը կտորին վրայ կաթիլ մը արցունք թափած է։ Գիտեմ, հայրենասիրութեան դասական հին մեթոտին կը հետեւիք տակաւին ու զայն կը քարոզէք. բայց աւերակներու վրայ լալու կոծելու ծիծռած դրութիւնը շատոնց հինցաւ։ Այս հաշուով Մարտիկ աղային օդապարիկով անգամ մը վեր ելլալն ալ ձեր հայրենասիրական մեթոտին մէջ կարեւոր տեղ մը կը բռնէ, չէ՞ մի։

Ուրեմն, շարունակելով հետեւիլ ձեր անզուգական տրամաբանութեանը, Իզմիրլեան, այս պաշտելի դէմքը, ձեր աչքին զերոյի չափ նշանակութիւն չունի, քանի որ անիկա կրօնք փոխած չէ, Եւրոպա ուսում չէ առած, օտար լեզու չի խօսիր և աւերակի մը կտորին վրայ արցունք մը չէ թափած։

Վերջապէս ձեր անհեթեթ ուղղութեան ամբողջ խեղկատակութիւնը դուրս ցայտեցնելու համար շիտակը պէտք չեմ տեսներ այս նամակս աւելի երկարել։ Մինակ, որովհետեւ ֆրանսերէն գիտնալու և այդ լեզուով թերթ մը հրատարակելու աղէտը կը ներկայացնէք մեր ազգային ներքին մաերժական բաները անխղճօրէն և անպատկառօրէն օտարին հաղորդելով. անանկ ուղորմելի և ամօթալի ձեւով մը որ ազգային արժանապատուութիւնը միմիայն կարեվէր կը խոցուի անկէց, որովհետեւ՝ երեւոյթը վերէն քննելով և դատելով՝ անոր մէջ անպատասխանատուութեան և անգիտակցութեան մեղմացուցիչ պարագայ մը կը դիտուի ձեզի ի նպաստ, իբրեւ ձեր նախկին երախտագէտ աշակերտը ուրիշ փրկարար խորհուրդ մը չեմ կրնար տալ ձեզ եթէ ոչ մէկ կողմ նետել կոտրտելիք գրիչնիդ և չէնք շնորհք Շարանթօնի ճամբան բռնել։

Ձեր մտաւորական և հոգեկան բուժումին համար ասիկա՝ կը տեսնեմ միակ հետեւելիք ճամբան։

ՇԱՀԻՐՆ

ԳՈՐԾԻՉ

(ՊԱՏԿԵՐ)

Պարիզի մեծ փողոցներից մէկի վրա գտնվող տներից մէկի երրորդ յարկի սենեակներից մէկում, թղթերով և գրքերով ծածկված գրասեղանի առջեւ, նստել է մի ծերունի հայ։ Սեղանի վերա ուշադրութիւն են հրաւիրում ծալված թերթեր, որոնց վրա պէտք է հասցէներ գրել։

Թերթերը ֆրանսերէն են. մի լեզու որ անմատչելի է ծերունու հայրենակիցների մեծամասնութեան։ Ծերունին ֆրանսերէն է գրում հայրենիքին ծառայելու համար! օտարներին այնպիսի նիւթեր տալով, որոնք հէչ պէտքը չեն նրանց։

Ծերունին ոչ ոք չունի. նա միայն է եղել միշտ. վեհափառ միայնութիւն է սիրում. նա իր կենքում միայն մի անգամ է ընկեր ունեցել իր հասարակական գործունէութեան մէջ։ Բերլինի վեհաժողովի ժամանակ, երբ հայ նշանաւոր պատգամաւորների մշուշապատ ու անորոշ պահանջները արտադրում էր վեհաժողովին ներկայացնելու և ազատութիւն մուրալու համար։ Վեհապանծ և պատմական մուրացկանութիւն, որը մեր ծերուկի յատկանիշը դարձաւ իր ամբողջ կեանքի ընթացքում։

Բայց ի՞նչ եմ ասում. ծերուկը միայն չէ. նրա աջ կրծքի վրա խաղում են երկու շքանշաններ, որոնք քնելու միջոցին ծերուկի հետ անկողին են մտնում։ Զախ կուրծքը աղատ է. սպասում է Ցարի շքանշանին, որի հետ ծերուկը բարեկամական կապեր է ուզում հաստատել աղգը, անպատճառ, փրկելու համար։

Ծերուկի մատները շարժվում են և հասցէներ դուրս բերում։ Նրանք շատ նուրբ են ու այնքան քնքուշ որ կարծես երբէք ոլորմութիւն չեն ընդունել հայ չորպաճուց։ Գրիչը, որ մի ժամանակ մեղուշ լեղու կերտելու համար, արագաբար էր շարժվում, հիմա դանդաղում է չը վճարող սեհրակ բաժանորդների հասցէները դուրս բերելու համար։

Շարժվում է գրիչը դանդաղօրէն ու միակերպ. կնճիռները հաւաքվում են Բերլինի եղուկ քարտուղարի ճակատում. ու նա հառաչելով արտասանում է.

—Ապերախտ նոր սերունդ. ոչ հարուստիդ կը սիրես, ոչ պատրիարքդ. ոչ պատգամաւորդ. Ինքզը փրկելու համար ամեն ճիգ թափեցի՝ միշտ մուրալով. և դիս ալ չը գնահատեցիր։ Դեռ իմ խելքիս վրան ալ չես հիանար։

Ծերուկը ընկղմեց այդ մտածմունքի մէջ. և, մեքենաբար հասցէ գրեց. հասցէն «Դրօշակ»ինն էր. ծերունին ցնցվեց. ու ձեց գրիչը կոտրել. բայց անկարելի եղաւ. «Դրօշակ» տառերը իմի ձուլվեցին, մեծացան մի զանգաձ կապմեցին, եւ այդ զանգածը վերածվեց մի թուխ, գանգրահեր, առոյգ ու բոցավառ աչքերով պատանու, որը բարկացած դիմեց խեղճ, դալկահար ծերուկին.

—Հեռու, ողորմելի ծերուկ. ես Հայ Ներկան եմ։ Բաւէ ինչ որ դու և քեզ նմանները խաբեցիք իմ նախորդին, Անցեալին։ Ցարիներով ճառեցիք, երբ կռւել պէտք էր. լացէք երբ հրճվել պէտք էր. մուրացիք, երբ պահանջել պէտք էր. հայ հարուստի, հայ կղերի և բռնաւորների առջեւ քծնեցիք։ Մի յանդգնիր այսու հետեւ իմ անունով լալու, մուրալու և քծնելու։ Ներկան քեզ հետ գործ չունի, դու հայ մուլացիկ, լալկան և քծնող Անցեալին ես պատկանում...։

ՎԱՐԴՈ

Ո՞Վ ՊԻՏԻ ՄԱՔՐԷ

Եթէ երբէք կան այսօր ազգային այնպիսի դէպքեր, որոնք օրէ օր կը ձգտին ժողովուրդը զզուեցնել ու պաղեցնել իր պաշտած ու պաշտելի ուղիղ դաղափարէն—ատոնց գլխաւորներէն մէկն ալ Հնչ. կուսակցութեան մէջ տեղի ունեցած կատակերգութիւնն է, որ շարք մը շահամոլներ այնքան անամօթութեամբ ու լրբօրէն յաւէն առած են զայն սարքելու եւ խեղճ հասարակութեան անթիւ ցաւերուն հատ մըն ալ աւելցընելու։

Դեռ շատ առաջ չէր, երբ միութեան ձայնը, խրոխտ ու անվեհեր՝. ովկեաններ ու աշխարհներ ճեղքելով, յաջողեցաւ իր քնքոյշ այլ կեղծ գանգիւններով կրկին միամիտ ամբոխ մը դիւթել, կրկին հոսանք մը քաշել տանիլ իր ետեւէն, հետզհետէ իր թիւը ստուարացնելով, միշտ յաղթական այլ ցնորեալ քրքիչներ ու պոռչտուքներ տեղալով ամէն կողմ։ Ու, ախտ՞ս որ, բեմին առջեւ թանձր վարագոյր մը քաշուած ըլլալով, հանդիսականները լոկ անոնց որոտալից ձայներէն ու կեղծ դիւցազներգութիւններէն արբչիս, չէին ուզած քննել խորը, ժութին մէջ պահուող ջղիկները փնտռել ու դուրս վտարել զանոնք, որոնք ամէն ժամ, ամէն րոպէ միջոց մը կը խորհէին իր արիւնը ծծելու եւ զինք չոր կմախք մը դարձնելու, մինչեւ որ, վերջապէս վարագոյրը բացուեցաւ եւ իրականութիւնները ինքնին երեւան եկան։

Ընթերցողներէն շատերուն արդէն յայտնի է թէ ի՞նչպիսի հրէշային խաղ մըն էր՝ որ կը խաղցուէր գաղտագողի, միշտ ջանալով միանգամայն ժողովրդին ցոյց տալ ծրագիրներ եւ ուղիներ, որոնք կրնային բառացի ազգեր ու աշխարհներ ազատել. սակայն, ամիսներով «նոր կեանքի» ճակատը դրուած միութիւնը կուգենք ըսող Վերակազմեալ պարոններն էին, որ առաջինը եղան եւ զայն վիժելու գաղափարն ալ ձգնիլ։ Վեր. հնչ. կուսակցութեան այս ապարքը մեզ ուրիշ բան մը խորհելու առիթ չըտար, բայց եթէ մոլութեան պատրուակով թէ՝ ժողովուրդին առաջ իրենց ինկած անունը բարձրացնելու ճիգ մը լնել, անոր էն փափուկ կողմին դպելով, ու երկրորդ գլխաւոր պատճառ մը, որուն նոյն իսկ հիմակուան խայտառակ արարքը վկայ մըն է, —այն ալ է մտնել հին կեդրոնին մէջ, մէկդի նետել իրենց վերակազմեալ անունը, որ շատ մը դժուարութիւններու առիթ եղաւ, ձուլուիլ անոնց հետ ժամանակ մը, մինչեւ որ անոնք թմրին, ու այնու հետեւ ասպարէզը իրենք գրաւելով կարողանան օտար դատարանին առջեւ կորսնցուցած վաղեմի «Հնչակն» ալ ձեռք բերել իբրեւ իրենց սեփականութիւն։

Ասոր ապացոյցը տեսնելու համար, կը թելադրենք ընթերցողաց աչքէ անցնել այս սիւնակներուն մէջ եւ բերուցած հէն կեդրոնի երեք անդամներու կողմէ գրուած շրջաբերականին ինչ ինչ մասերը, ուր պիտի զանեն թէ ինչպէս միութեան առաջին օրէն իսկ անհաւասար զգուշութիւն մը ծագած է երկուքին միջեւ։ Մենք կը հաւատանք եւ կը խոստովանինք որ հին հնչ. կեդրոնի անդամները հեռի էին այն բոլոր վրպարտութիւններէն, զ.ր խումբ մը միմուներ կը ճգնին զանոնք ցուցնել, ու այս երկրորդական անջատումին միակ ու էական պատճառը, որ իրենէ կար ու կը մնայ երկու կողմի անձնաւորութեանց միջեւ,—գործելու եւ թշուառին օգնելու, նստելու եւ ժողովուրդը խաբելով զուարճանալու խնդիրը է, որ անկարելի եղաւ երկար ժամանակ ծածուկ մնալ։

Նորէն կը կրկնենք հոս, միթէ կարելի՞ էր յուսալ լա ազոյն բան մը այնպիսի կեդրոնէ մը, որուն էն գլխաւոր անդամներէն մէկը կընտրուէր անձ մը, երբ ժողովրդին մէջ ու հրապարակին վրայ իրեւ մատնիչ մը կը դատափետուէր։ Ուրեմն՝ —որքան որ ալ գայթակղելու առիթ տայ մեր այս խօսքը—պիտի չը վարանինք ըսել որ ինչպէս եւ գուցէ շատեր ալ մեզ հետ, ուրախ ենք թէ

այսպիսի դիմակաւոր սուտ արարածներու խարդախութիւնները երկար չը տեւեց այս անգամ, իրենց սարքած ծրագիրները շուտով խորտակուեցան եւ ուրիշ բան չկրցան ընել բայց եթէ երկնային սրբութեամբ գեղուն պատուելին կանչել Ամերիկայէն, իրենց ճամբայ մը եւ խելք մը ցոյց տալու համար, որն երբէք չը զլացաւ իր այդ մեծ անձնուիրութիւնը։

Պատ. Չիթճեան անմիջապէս փութաց Լոնտոն, ու իր առաջին սրբութիւնը ուզեց յայտնել, կեդրոնի առ ղափոխութիւն առաջարկով. որուն միայն հաւանութիւն տուողները եղան նոր կեդրոնի երեք անդամները, ու այս եղաւ գեղեցիկ պատճառ մը, ուրիշ զանազան գժտութիւններու հետ, ինչ. երկրորդ անջատումին, որոնք անմիջապէս փութացին իրենց հրաժարականները տալով հեռանալ։

Բայց դեռ աւելին ալ կայ։ Վեր. հնչակեան կուսակցութեանը իր խայտառակութեան եւ ընկածութեան գագաթնակէտը ցուցնելու համար, չամչցաւ եւ երկրորդ «Հնչակ» մըն ալ ինքը դուրս հանել։ Աստուա՛ծ իմ, մէկ կուսակցութիւն, երկու կեդրոն, երկու զատ օրկան, միեւնոյն տարեւով, միեւնոյն թուականով ու... տարբեր պարունակութեամբ, եւ այս ամէնուն հանդէպ գտնուեցան դեռ շարք մը հիւանդներ ալ, որոնք ծիծաղելի գաղափարը ունեցան խորհելու եւ արտայայտելու թէ «հնչակեան բաժանում եղած չէ, հնչակեան բաժանում չըլլար, հնչակեան բաժանում չկրնար ըլլալ»։ Կը հարցնենք ուրեմն ի՞նչ կը նշանակէ այս երկու «Հնչակ»ներու երեւումը միեւնոյն կուսակցութեան անունով, ուրոյն հասցէներով, ուրոյն անձերու կողմէ. ի՞նչ կը նշանակէ իրարու դէմ այսքան ցեխ ու նախատինք պոռթկալ, իրար վարկաբեկել, զիրար զգետնել, նոյնիսկ զիրար «սրիկայի» փառքին ալ արժանացնելով։

Ահա այս երկրորդ անգամն է որ Հնչ. կուսակցութիւնը իր դաւաճանի դերը կը կատարէ իր առջեւ գործուող արիւնհեղութիւններուն ու տառապանքներուն հանդէպ, երբ անդին հայրենի սեւ մթնոլորտին ներքեւ հարիւրներ, հազարներ «օգնութիւն» կանչելով անսուաղ թշնամիին մերկ սուրերուն ներքեւ կեանք կը զոհեն, երբ անդին, հարիւրաւոր մայրեր, քոյրեր ու մանուկներ, գազանային ժանիքներէն խուսափելու համար ճար մը, միջոց մը, ճամբայ մը կը խնդրեն։

Ո՞վ չէր սիրեր միութեան ձայնով Եւրոպայի կամ Ամերիկայի մէկ անկիւնը հեզիկ հեզիկ օրօրուիլ ու.. հրճուիլ, ու ժամանակ առ ժամանակ ալ ներբողներ հիւսել. սակայն, այլ եւս գործելու ժամանակ է, գործ պէտք է միայն հայրենիքի արդի կացութիւնը լաւագոյն մակարդակի մը վրայ դնելու համար։

Շատերը իրենց կերտած հայհոյանքներէն ու նախատինքներէն է՛ն գարշելին ու էն ամօթալին ալ չը զլացան Դաշնակցութեան հասցէին ուղղել. երբ ան իր անցեալի փորձառութենէն օգուտ քաղել կուզէր քէթ ժամանակ մը, ստուգելու թէ արդեօք այդ իրաւ միութի՞ւն մըն է որ կրնայ տկարը զօրացնել, վախկոտը սրտապնդել, թէ միութեան դիմակին ներքեւ աւելի զօրաւոր խըզում մը։ Եւ այսօր խնդիրը պարզ է. ամէն մարդ ազատ է դատել, ազատ է հրեւակայել այն ողբալի նըմանութիւնը, որուն կրնար հաւանականօրէն բաղդակից ըլլալ Դաշնակցութիւնն ալ, եթէ երբէք այդ տեսակ ցնորամիտներու հետ ձեռք թօթուելու ու անոնց նման շահամոլներու հետ մեծ ու սրբազան գործ մը սկսելու յիմարութիւն ալ յանձն առած ըլլար։ Բայց ան գիտցաւ իր պատիւը պաշտպանել ու իր նուիրական խոէչը ուզեց յառաջ տանիլ անկեղծ ու անվրդով. խուլ ու անփոյթ իր շուրջը թափուող փսխուքներուն։

Ա՛լ ժամանակ է որ ժողովուրդը շարժի, ու գիտնայ դուրս վանել այդ Հնչակեան սինլքորներու, շահամոլներու եւ խաբեբայ կեղծարարներու անպիտան խմբակը, որոնց միակ նպատակը եղած է ու է, սուտ եսականութիւն մը, անհոգ ուրիշներու բողոքներուն ու գանգատներուն. անհոգ եւ իրենց ուղղուած այն անվերջ ու սրտաճմլիկ աղերսանքներուն։ Ազգային այս մեծ ու գարշելի արատը մաքրագործումի կարօտ է։ Շուտով գտենք դայն։

Մենաւոր

Լոնտոն

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Վիեննա, 2 փետ. 903

Թող ներեն ինձ «Շարժում»ի ընթերցողները—ես ստիպուած եմ մի վայրկեան վրաղեցնել նրանց մեր մշտադալար մանուկ՝ Զերազի անձնաւորութեամբ։ Ես առաջները այն տպաւորութիւնն ունէի Մինաս Զերազից, որ նա ճշմարիտ է, ես չէի իմանում, որ նա չար մարդ էլ է... ով որ առիթ է ունեցել վերջին ժամանակներս հետեւելու նրա հրապարակախօսական մարզանքներին, գիտէ թէ որքան ճիգ է թափել նա վարկաբեկելու «Պրօ Արմէնիա»ն եւ նրա խմբագրական մարմինը։ Չեմ ուզում ծանրանալ, — իրազեկ ընթերցողը գիտէ, որ այդ մրցակցութեան պատճառները այնքան էլ մաքուր չեն... Չեմ էլ ուզում համեմատութեան խօսք դնել՝ թէ ինչ է «Պրօ Արմէնիա»ն հայկական դատի համար եւ ինչ է «Արմէնի»ն։

Ես մէկն էի նրանցից, որոնք ժամանակին հասարակական ուշադրութեանը մատնեցին հայ խմբագրապետի այդ տգեղ արարքը (մի տարի առաջ «Հայրենիք»ի էջերում)։ Փաստերը շատ էին պերճախօս եւ Մ. Զ. քաջութիւն չունեցաւ ըստ էութեան առարկելու։ Այնուհետեւ նա դադարեցրեց ուղղակի յարձակումները «Պրօ Արմէնիա»ի դէմ, բայց շարունակեց անուղղակի գաղտասուքներ, ինսինուացիաներ. Նա չը խնայեց եւ «Դաշնակցութիւնը», որը կերեւայ թէ յանցանք կը գործէր՝ «Պրօ Արմէնիա»ին օգնելով։

Նա չը խնայեց եւ մասնաւոր դաշնակցականներին և ինձ, նաեւ։

Զերազը չի մոռանում «Հայրենիք»ի յօդուածը եւ ամեն առիթով փորձում է խածնել ինձ։ Երբ առիթ չը կայ, կարելի է հնարել։ Բայց հնարելու ամենասովորական ճարպկութիւնն անգամ պակասում է մեր կր[illegible]-անճանին։ Եւ նա անում է, օրինակ. այսպիսի չարութիւններ. անցեալներ ցոյց տուին ինձ «Արմէնի»ի վերջին համարներից մին (հոկտեմբեր, թէ նոյեմբեր, լաւ չեմ յիշում), ուր լուրերի բաժնում խօսում է իմիջի այլոց «Շարժում»ի մէջ տպուած մի յօդուածի եւ նրա հեղինակ Փողահարի մասին, Զերազ գտնել է, որ այդ փողահարը ես եմ եւ թափում է վրաս իր բոլոր մաղձը։ Այն տեղ նա ինձ անուանում է Դոշակեան վարձկան եւ իմ գրածները՝ ստախօսութիւն... Թուլամիտ էի կարծում Զերազին, բայց ոչ այդ աստիճան թեթեւամիտ։ Որքա՛ն ապականված պիտի լինեն գրական բարքերը, որպէսզի մի մարդ, որ հրապարակախօսի հովեր է առել իր վրայ, առանց փաստի, առանց հաւանականութեան ստուերի անգամ, լոկ քմահաճոյքով անուանարկէ ուրիշին...

Լուրը զարմանքով կարդացի,—ես ոչ փողահարին եմ ճանաչում եւ ոչ էլ էլ գրած եմ «Շարժում»ի մէջ։ Ուղարկեցի «Արմէնի»ի խմբագրին մի փոքրիկ հերքում, վստահ լինելով, որ պիտի յետ վերցնէր ամբաստանութիւնները։ Բայց Պ. Զերազ—տասնեակ տարիներ լուսաւոր երկիրներում թրեւ եկող այդ «եւրոպացին»—առանց բացատրութեան յետ ղրկեց ծրարս, մտածելով անշուշտ, աւելի թունդ պատժել ինձ... մանուկ, և այն էլ անկիրթ ու երկչոտ մանուկ: Ծրարը վերադարձրեց լաւ գիտենալով, որ քաղաքացիական արիութիւն չը պիտի ունենար հերքումս տպագրելու։ Բայց այդ աւելի եւս իրաւունք է տալիս ինձ՝ խօսել հրապարակով։

Եթէ Մինաս Զերազ դեռ վերջնականապէս չի անցել ազնուութեան հաւատակորդների շարքը, նա հրապարակօրէն յետ կը վերցնէ յիշեալ վիրաւորանքները, որոնք իր ներքին համոզմունքով իսկ բացարձակապէս կեղծ են եւ չեն էլ հաճում ինձ։

«Ստախօս» եւ վարձկան—արդարեւ։ Բայց Ո՞վ...

Միք. Վարանդ'եան

Բարիզ, փետ. 1 1903

Ժամանակէ մը ի վեր Եւրոպայի առաջնորդ Գէորգ եպիսկոպոս Իւթիւճեանի անուան շուրջը կը դառնայ կարգ մը զրոյցներ. կը պատմեն թէ այս մարդը իր յաճախած բոլոր շրջաններուն մէջ կը ճգնի ջլատել այն համարումը, համակրանքն ու տկար, մէջակ նշոյլը որ հայ ջիջը սկսած է ունենալ դէպի կռուող տարրը. կը պատմեն թէ իր էն մտերիմ բարեկամները կը բաղկանան թիւրք հիւպատոսներէ ու յայրաս հայ էֆէնտիներէ, կը պատմեն նաեւ թէ Փարիզի, Մանչեսդրի և Մարսէլի հայերուն մեծամասնութիւնը այլ եւս իր բանակալի բիրտ բնութենէն զանուած, զզուած կը տանի իր ներկայութեան ծանր, անտանելի բեռը, միայն Պոլսոյ հետ ունեցած սերտ յարաբերութիւններուն պատճառաւ և վերջապէս շատ մը տգեղ բաներ կը պատմեն և այս բոլոր մինչեւ ցարդ լոկ պատմութիւններ նկատած ըլլալով իրմով զբաղելու ձանձրոյթը չէինք առած և չ'պիտի առնէինք դարձեալ եթէ երբէք դիպուածը մեզ չ'հայթայթէր այս զայրացուցիչ պատմութիւնները ճըշդող անհերքելի ապացոյցը։ Նամակ մը ունիմ ձեռքիս տակ իրմէն իր մէկ ծանօթին գրուած 15 նոյ. 1901ին, գարշելի մի նամակ արհամարհանքով, նախատինքով լեցուն հրէշային մի արտադրութիւն։

Անկարելի էր հաւատալ որ մեր տարաբաղդ հայրենիքի ներկայ ճգնաժամային դրութեան մէջ հայ մը մանաւանդ ազատ երկիր ապրող եպիսկոպոս մը կրնար իրենց դատին ազատագրութեան համար կռուող անօրինակ անձնուէր քաջերը նախատելու չափ ստորնանար որակելով զանոնք... «անամօթ բաղդախնդիրներ», կրնար նոյնպէս անյարգել նուիրական հարց մը որուն էութեան մէջ միայն կը կայանայ հայ ցեղի գոյութիւնը՝ հայկական հարցը կոչելով զանի «հոտած-հաւկիթ»։ Լիրբ արարած, տարօրինակ համարձակութիւն։ Ո՞վ է արդեօք «անամօթ բաղդախնդիրը» այն ազնիւ, անձնուէր հայդո՞ւկը որ թողնելով հանգիստ կեանք ու ապագայ կերթայ զոհել իր մատաղ կեանքը հայրենիքի փրկութեան համար և կամ այն անտաճ, անբան եպիսկոպոսը որ մի քանի ջերմեռանդներու հաւատքը շահագործելով կը վարէ իշխանական նախանձելի կեանք զանց առնելով իր բուն պարտականութիւններու տարրական կէտերը իսկ, աւելի լաւ և օգտաւէտ չէ՞ր լինէր որ եպիսկոպոսը զբաղէր թեմական ու դաւթականական գործերով փոխանակ իր կարողութենէն ու դատողութենէն շատ բարձր բաներով զբաղուելու ու... թիւրք հիւպատոսներու գործիք դառնալու՝, ան ալ իր հրէշային ալարքներուն բովանդակ գիտակցութեամբը։ Դանի որ կրկին և կրկին կաղաչէ, կը պաղատի իր ծանօթին որ իր աղանդութիւնը հրապարակ չի հանէ, —ինչո՞ւ—և «այս խնդրոյ մասին իրազեկ մարդոցմէ տեղեկութիւն քաղելով իրեն հաղորդէ»։ Հասկնալ կը սիրէինք թէ յիմար, թեթեւսոլիկ, անամօթ և բաղդախնդիր մարդերու գործը ի՞նչ նպատակով կը շահագրգռէ եպիսկոպոսը...։

Ահա իր նամակը, անկէ կը քաղեմ մեզ հետաքրքրող կէտերը,

...Վերոյիշեալ թերթէն ու ուրիշ թերթերէ տեղեկացած եմ թէ վերջին փրանք և թիւրք խնդրոյ առթիւ մեր թեթեւսոլիկները դարձեալ անխոհեմ ընթացից հետեւած են որոց յարմարած է նաեւ տէր Վասմղաւեանը. քանի քանի անգամներ խրատեցի զինքը և յորդորեցի որպէսզի այսպէս իրեն չը վերաբերեալ խնդրոյ մէջ չը միջամտէ,... այս ու այն բաղդախնդրին չը յարմարի... մեր «անամօթ բաղդախնդիրները» և անոնց խելքէն եղող յիմարները չը կրցան հասկնալ թէ Եւրոպան իրեն խաղը խաղալու համար մերթ ընդ մերթ մէջտեղ կը նետէ «հայոց խնդիր» մը մինչեւ որ իր հաշիւը կարգադրէ. մերայինք յարմարելով այսպիսի «հոտած հաւկիթ»ներ գլորող կառավարութեանց կոյր գործիք կըլլան։.. Կը խնդրեմ որ այս գրածներս մէկու մը չխօսեցնես և այս խնդրոյ ետեւէ ըլլաս. Նոյն իսկ քահանայէն ու այլ իրազեկ մարդոցմէ տեղեկութիւններ քաղես ու տեղեկագրես ինձ. ու այս թղթերս ալ քու տեղեկագրիդ մէջ դնելով յետ ղրկես... կրկին կը խնդրեմ որ այս նամակս ոչ քահանային և ոչ ալ ուրիշի ցոյց չը տաս և ամէն բան գրես ինձ..»։

Ահա մարդը որուն յանձնուած է Եւրոպայի առաջնորդութիւնը, հայ գործերը։ Բան մը եւս (իրմով ալ աւելի ժամանակ չը կորսնցնելու համար)։

Այս մարդը որ ախմարութեամբ հայութեան բովանդակօրէն կը [illegible] ամեն տեսակէտով, հետեւաբար Եւ-

բոպայի գաղթականութիւններու, շատ մը պարտականութիւններու էն ստիպողական է այս մարդուն հրապարակէն հեռացնելը, այս մոքրագործումի գործը կրնայ կատարել միայն Փարիզի գաղթականութիւնը, քանի որ անոր մեծամասնութիւնը Թիւրքիայի հետ ոչ է յարաբերութիւն չունի ու կը բաղկանայ անկախ ու կուսող երիտասարդներէ։

Զ. Զայրոյթեան

ԺՕՐԺ ՊՐԱՆՏԷՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱՅ

—o—

Փետր. 2 թիւով Պէրլինէն «Ֆրանքֆուրդէր Յայթունկ»ի կը գրեն.

Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան կողմէ հրաւիրուած՝ Ժօրժ Պրանտէս այսօր բանախօսութիւն մը ըրաւ հոս այն երկրին վրայ, զոր ինք իսկ Փոքր Ասիոյ Զուիցերիան անուանեց։ Բայց միայն Հայաստանի տառնձ. նայատկութեան, երկրին ու ժողովուրդին և միայն գրականութեան վրայ չխօսեցաւ—այս մասը երկրորդ աւելի կարճ բաժնի մէջ մուտք գտաւ. գլխաւորաբար քաղաքական ագիտացիական բանախօսութիւն մըն էր, զոր Պրանտէս «Հայաստան ու Եւրոպան» յատկանշական վերնագրին տակ ըրաւ։ Որոշութեան մասին փափաքելու բան մը չը թողուց և ներածման մէջ անմիջապէս յայտարարեց, որ հարկաւոր կը նկատէ, Եփրատին եզերքի հնաքաղաքակիրթ և թշուառ ազգին համար ձայն բարձրացնել։ Ձայն՝բարձրացնել գերման ժողովուրդին մէջ, որուն կառավարութիւնը արգահատելի բարեկամութեամբ Թուրք բռնապետութեան կողմ կանգնած է։ Պրանտէս յետոյ սկսաւ այդ սարսափներու ամենավատ մանրամասնութիւնները նկարել, տեղեկութեանց համեմատ, որոնց հեղինակներու անունները չյայտնեց։ 1894ի մեծ կոտորածը այնտեսակ գոյներով ներկայացուց, որոնք ըստ երեւութին առանց դիտաւորութեան, իրականօրէն լաւ կշռադատուած դիտաւորութեամբ անտանելի տատկեր մը կազմեցին։ Ասոր վրայ երկու տիկիններ սրահը թողուցին և Պրանտէս լորբոքած կրակի թեմբերամէնթով վրայ բերաւ. «մինչ որ Պէրլինի տիկինները չեն կրնար նոյն իսկ լսել, դուք ձեզի խորհեցէք հարիւր հազար անգամ աւելի և իրօք պատահած», եւ այս երկիրը, օտար պետութիւններու մէջի եռաբաժանումով Լեհաստանի հետ բաղդատելի, մեր կարեկցութեան արժանի է, ոչ միայն իր ցաւերով, այլ նաեւ իր պատմական զարգացումով որ, զայն եւրոպական քաղաքակրթութեան բահ վիրան» երեւցնել կուտայ։ Փամանակ մը կը թուէր որ եւրոպական միջամտութիւն մը կարելի է սպասել. առնուազն Պերլինի վեհաժողովին մէջ մեծ պետութիւններ իրենց վերապահած են Թուրքիոյ դէմ յառաջխաղացում մը։ Բայց Թրքական գապինէթը այսօրինակ սպառնալիքներու վրայ կը ծիծաղի—«Սուլթանի անձը» յայտարարուց Պրանտէս «վանկով մը իսկ չոչափել չեմ ուզեր» և անգլիական ուուրիշ դեսպաններու գանգատներ բնաւ չոգնեցին, որովհետեւ Թուրքիան ռմբակոծումի մը վտանգին դէմ վստահելի պաշտպանութիւն ունի գերման կառաւարութեան բարեկամութիւնը։ Ասով բանախօսը իր բնաբանին հասած էր. հասարակական կարծիքը Գերման ժողովրդին մէջ այնքան զօրաւոր բարձրանալու է, որ սնոր քաղաքական ղօրավիդները յետադարձի հարկադրուած տեսնեն. 600 հոգիէ բաղկացած ժողովը (երկսեռէն) բուռն ՀԸՆորհակալեօք իր ձեւով փառաւոր բանախօսութիւնը վարձատրեց։ Յետոյ, «հայկական երեկոն», որ ըստ ծանօթ տիպարի «յուզիչ անճարակութեամբ» (*) սարքուած էր. նուագով ու պարով շարունակուեցաւ։

Դաւառացի

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

—o—

Հինգշաբթի գիշեր «Սանթրալ» սրահին մէջ տեղի ունեցաւ խուռն բազմութեամբ ինպատ ընկերութեան թատերական ներկայացումն։

Գորթ. Ժողովս կուգայ հրապարակաւ իւր խորին շնորհակալութիւնը յայտնելու վսեմ. Նահանգապետին որ բարեհաճած էր իր բարեկամներով ներկայ գտնուիլ և աւելի փայլ մը տալ երեկոյթին։

Շնորհակալութիւն այն ամէն հայ և օտարազգի պատ. անհատներու. որոնք ինկատի ունենալով ընկերութեան ինամած 17 որբերը սիրայօժար չը մերժեցին մասնակցիլ, ինչպէս նաեւ ոմանք իրենց նուիրատուութեամբ։ Նաեւ շնորհակալութիւն հայ դերասանական «ՎԷՍԷԼՕ» խումբին որ հաճեցաւ բոլորովին անձնուիրաբար, և նոյն իսկ բեմական և այլ ստիպողական ծախքեր ընկերութեան նուիրելով ՍԻՒԶԱՆ ԻՄՊԷՐ բարոյալից թատերախաղը ներկայացնել յուզիչ կերպով որ քանիցս ծափահարուեցաւ հանդիսականներէն։

Գորթ. Ժողովս կուգայ հրապարակաւ ներողութիւն խնդրել այն պատ. ազգայիններէն որոնց դիմելու մոռցուած է, որովհետեւ Գորթ. Ժողովը յանկարծ շատ տխուր և տգեղ անակնկալի մը հանդէպ գտնուեցաւ և թէ գրեթէ մէկ կէս օրուան մէջ կազմակերպեց երեկոյթն։

Մնամք յարգանօք
Ի դիմաց Գորթ. Ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Ց. Կ. Ճանկիւլեան Ց. Ս. Գոչուն ան
(ԿՆԻՓ)

(*) Նամակագրի այս նկատողութիւնը ուրիշ անգամներ անուշադիր չը մնար հարկաւ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Թուրք կառավարութիւնը շրջաբերականով մը իմացուցած է եւրոպական պետութիւններուն որ Պուլկարիոյ մէջ հրոսախմբեր կը կազմակերպուին Մակեդոնիա խուժելու համար։

— Մակեդոնիոյ մէջ Թուրք կառավարութիւնը ձերբակալեր է մակեդոնական կոմիտէի սուրհանդակներէն մին, որուն քով իբր թէ գտնուեր են շատ մեծ գաղտնիքներ պարունակող թղթեր։

— «Ն. Ֆ. Բրէս.» թերթը կը յայտարարէ որ ինք ստոյգ աղբիւրներէ իմացած է թէ շուտով Աւստրիոյ և Ռուսիոյ արտաքին գործոց նախարարները վերջնական համաձայնութեան պիտի յանգին Մակեդոնիոյ բարենորոգումներու մասին։

— «Թարմչի» կը հեռագրեն հետեւեալը. բացի պաշտօնական տեղեկութիւններէն մասնաւորներն ալ կստացուին որ կը հաստատեն Պիթոլիոյ նահանգի մէջ տեղի ունեցած խժդժութիւնները և Թուրքիոյ մեծ պատրաստութիւնները։

Պաշտօնական շրջանակներու մէջ լաւատեսօրէն համոզուած են որ Պուլկարիոյ և Թուրքիոյ միջև պատերազմ ծագած պարագային միայն այդ երկու պետութեանց մէջ պիտի սահմանափակուի։

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Անցեալ ուրբաթ գիշեր Սոֆիայի մէջ կամուրջ մը մեռաւ Պուլկարիոյ կարեւոր պետական գործիչներէն մին՝ Բէթքօ Քարավէլօֆ։

Բէթքօ Քարավէլօֆ բոլորովին աղքատ կը մեռնի, չը նայելով որ շատ բարձր պաշտօններ վարած է։

Թաղման հանդէսը կատարուեր է պետութեան հաշուով. երս-փոխանական ժողովը որոշեր է տարեկան վեց հազար ֆրանք թոշակ վճարել հանգուցեալի ընտանիքին։

— Պուլկար կառավարութիւնը եւրոպական պետութեանց յայտարարած է Թուրքիոյ հաղորդածը, որ իբր թէ Պուլկարիոյ մէջ հրոսախմբեր կը կազմուին Մակեդոնիա խուժելու համար, բոլորովին սուտ է և ինք պատրաստ է միջազգային յանձնախումբի մը յանձնել այդ խնդիրը քննելու։

— Կարապիպերով հրոսակապետին սուրհանդակը Քիւստէնտիլ հասեր է և անոր մէկ նամակը բերեր է, որուն միջոցով Կարապիպերով կը հաղորդէ որ իր հրոսախումբը երկրորդ անգամ ընդհարում ունեցեր է Թուրք զօրքերու հետ, անոնցմէ խլեր է տասը Մաուզէրի հրացան շատ մը փամփուշտներ, սպաններ են 27 զինուոր և 14ն ալ վիրաւորեր են։ Հրոսախմբէն միայն երեք հոգի թեթեւ կերպով վիրաւորուեր են։

— Պուլկարիոյ կարեւոր քաղաքներուն մէջ հոգեհանգիստներ կատարուեր են հանգուցեալ Գարաֆէլօֆին համար։

Իշխանը անձամբ գացեր է հանգուցեալի տիկնոջը իր ցաւակցութիւնները յայտնելու։

——

ՉԻՆԱՍՏԱՆ

Զանազան տեղերէ լուրեր կը հասնին որ Չինացիները զգաստաբար կը պատրաստուին կրկին օտարականները ջարդելու, և աւելի մեծ ծաւալով քան պատերազմէն առաջ եղաւ։

— Լուր տարածուած է որ կայսրուհին մեռած է, սակայն պալատը այդ լուրը չի յայտարարեր մինչեւ որ նոր տարիին հանդէսները վերջանան։

ՖՐԱՆՍԱՑԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՎԻՊՅՍԱՆՆԵՐԷՆ ԼՈՒԻ ՆՈՒԱՌԻ

ԱՆԻԾԵԱԼ ՊԱՆԴՈԿԸ

Գերազանցապէս հետաքրքրաշարժ

Առաջին մասը լրացաւ

Երկրորդ հատորը սկսաւ հստակուիլ

Ամէն դասակարգի դիւրամատչելի ըլլալու համար՝ գիրքը երկու մասով երեւան կելլայ (մէկ հատորի մէջ) եւ ամբողջութիւնը 52-54 թերթերէ պիտի բաղկանայ։

Իւրաքանչիւր մասին բաժանորդագինն է՝ Վառնայի համար 1,25. ուրիշ քաղաքներու եւ արտասահմանի՝ 1,50. իսկ ամբողջութեանը բաժանորդագինն է, Վառնայի համար 2,50. եւ Վառնայէ դուրս 3 ֆր. ձեռքէ առնողները պիտի վճարեն առաջուան պէս՝ 8 երեսնոց պրակին՝ 5 սանթիմ։

Այն քաղաքները եւ կամ գիւղերը ուր մէկէ աւելի բաժանորդ ունինք, միայն մէկ հասցէի տակն շարաթ երկու պրակը մէկ ծրարով պիտի ղրկուի, իսկ առանձին բաժանորդի պրակները 6 հատը մէկ ծրարով պիտի ղրկուի փոստի ծախքը հրատարակչին վրայ է։

Փափաղողները պէտք է դիմեն հետեւեալ հասցէին՝

imprimerie Orientale, Onnik Parseghlan Varna

Դրամի փոխարէն նամակաղրոշմ ալ կ'ընդունուի։

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ

Печатнипа „Взаимность» Варна